

# ArCa Business և Visa Business քարտերի տրամադրման և սպասարկման սակագներ

|   | ArCa Business  | Visa Business  |
|---|--|--|
| <b>1. Քարտային հաշվի սպասարկման միջնորդավճար</b>  | 7 000 ՀՀ դրամ/ acba digital համակարգով պատվիրելու դեպքում՝<br>5 000 ՀՀ դրամ տարեկան <sup>1</sup> | 16 000 ՀՀ դրամ/ acba digital համակարգով պատվիրելու դեպքում՝<br>15 000 ՀՀ դրամ տարեկան <sup>2</sup> |
| <b>2. Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք</b>  | 0%   | 0%   |
| <b>3. Վարկային գծի օգտագործման և/կամ հաշվի գերածախսի դիմաց գանձվող տարեկան տոկոսադրույք</b>                           | - ՀՀ դրամ՝ 18-20%,<br>- ԱՄՆ դոլար՝ 16-20%,<br>- Եվրո՝ 14%-17%                                    | - ՀՀ դրամ՝ 18-20%,<br>- ԱՄՆ դոլար՝ 16-20%,<br>- Եվրո՝ 14%-17%                                      |
| <b>4. Վարկային գծի օգտագործման անտոկոս ժամանակահատված (միայն վճարային գործարքների համար)</b>                          | -  | գործարքի ձևակերպման օրվանից մինչև հաջորդ ամսվա 7-րդ օրացուցային օրը                                |
| <b>5. Ամսական պարտադիր մարումներ</b>  | 10%  | 10%  |
| <b>6. Լրացուցիչ քարտի սպասարկման միջնորդավճար (թողարկվում է հիմնական քարտի ժամկետով)</b>                              | -  | ArCa Business՝ 3 000 ՀՀ դրամ միանվագ <sup>3</sup>  |
| <b>7. Կից քարտի սպասարկման միջնորդավճար (թողարկվում է հիմնական քարտի ժամկետով)</b>                                    | - առաջին երկու քարտերը՝ անվճար<br>- երրորդ և հաջորդ բոլոր քարտերը՝ 1 000 ՀՀ դրամ                 | - առաջին երկու քարտերը՝ անվճար<br>- երրորդ և հաջորդ բոլոր քարտերը՝ 3 000 ՀՀ դրամ                   |
| <b>8. Քարտային հաշվի արժույթ</b>  | ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո   | ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո   |
| <b>9. Քարտի գործողության ժամկետ</b>   | 5 տարի   | 3 տարի   |
| <b>10. Կանխիկ դրամի տրամադրում բանկումատներում և կանխիկ տրամադրման կետերում</b>                                       |  |  |
| - Ակրա բանկ   | 0.1 % <sup>4</sup> / 0.3% <sup>5</sup>   | 1%   |
| - այլ բանկեր Հայաստանում  | 1%   | 1%   |
| - այլ բանկեր արտերկրում   | -  | 1%, նվազագույնը՝ 1 500 ՀՀ դրամ   |
| <b>11. Կանխիկ տրամադրման օրական առավելագույն չափ</b>  | -500 000 <sup>4</sup> / 1 000 000 ՀՀ դրամ<br>- 2 000 Եվրո<br>- 2 000 ԱՄՆ դոլար                   | - 1 000 000 ՀՀ դրամ<br>- 2 000 Եվրո<br>- 2 000 ԱՄՆ դոլար   |
| <b>12. Կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակ</b>  | 5  | 5  |
| <b>13. Վճարային գործարքների օրական առավելագույն չափ</b>   | - 2 500 000 ՀՀ դրամ<br>- 5 000 ԱՄՆ դոլար<br>- 5 000 Եվրո   | - 2 500 000 ՀՀ դրամ<br>- 5 000 ԱՄՆ դոլար<br>- 5 000 Եվրո   |
| <b>14. ՀՀ տարածքում քարտից քարտ փոխանցումներ առցանց հարթակների, «acba digital» ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով</b> | 0.5%   | 0.5%   |
| <b>15. Բանկումատների միջոցով քարտից քարտ փոխանցումներ</b>   | 0.2%   | 0.2%   |
| <b>16. SMS-տեղեկացում ծառայություն</b>  | 15 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ<br>(յուրաքանչյուր հաղորդագրության դիմաց)                                | 15 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ<br>(յուրաքանչյուր հաղորդագրության դիմաց)                                  |
| <b>17. Քարտի փոխարինում Հայաստանում</b>   | 1 000 ՀՀ դրամ  | 2 000 ՀՀ դրամ  |

<sup>1</sup> POS-տերմինալների և առցանց վճարումների սպասարկման գծով Բանկի հետ համագործակցության պայմանագիր ունեցող առևտրի և սպասարկման կետերի հիմնադիրների և տնօրենների համար՝ 3 000 ՀՀ դրամ տարեկան:

<sup>2</sup> POS-տերմինալների և առցանց վճարումների սպասարկման գծով Բանկի հետ համագործակցության պայմանագիր ունեցող առևտրի և սպասարկման կետերի հիմնադիրների և տնօրենների համար՝ 5 000 ՀՀ դրամ տարեկան:

<sup>3</sup> POS-տերմինալների և առցանց վճարումների սպասարկման գծով Բանկի հետ համագործակցության պայմանագիր ունեցող առևտրի և սպասարկման կետերի հիմնադիրների և տնօրենների համար՝ անվճար:

<sup>4</sup> Տվյալ սակագնի դեպքում POS-տերմինալների և առցանց վճարումների սպասարկման գծով Բանկի հետ համագործակցության պայմանագիր ունեցող առևտրի և սպասարկման կետերի հիմնադիրների և տնօրենների համար քարտի տարեկան սպասարկման միջնորդավճարը սահմանվում է 500 ՀՀ դրամ ամսական կամ 5 000 ՀՀ դրամ տարեկան:

<sup>5</sup> Այն դեպքում, երբ ArCa Business քարտը կցվում է Visa Business քարտին, ապա ArCa Business քարտի կանխիկացման միջնորդավճարը բանկումատներում և կանխիկ տրամադրման կետերում կազմում է 1%:

## Ծ Ա Ն ՈՒ Ց ՈՒ Մ Ն Ե Ր

Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի ընթացքում տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով տարեկան տոկոսային եկամտաբերությունը բոլոր քարտերի համար կազմում է 0%:

✓ Ակբա բանկում ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից» հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝

✓ միայն դրամային ավանդի դեպքում՝ 16 մլն ՀՀ դրամ,

✓ միայն արտարժույթային ավանդի դեպքում՝ 7 մլն ՀՀ դրամ,

✓ և՛ դրամային (7 միլիոնից ավելի), և՛ արտարժույթային ավանդների դեպքում՝ միայն դրամային ավանդը՝ մինչև 16 մլն ՀՀ դրամի չափով,

✓ և՛ դրամային (7 միլիոնից պակաս), և՛ արտարժույթային ավանդների դեպքում՝ դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 մլն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով:

Տոկոսագումարները հաշվարկվում են քարտային հաշվի մնացորդի նկատմամբ, օրական կտրվածքով, քարտի գործողության ողջ ժամկետի համար: Տոկոսագումարի հաշվարկը դադարեցվում է քարտի գործողության ժամկետի ավարտին հաջորդող ամսվա 14-ին կամ հաջորդ աշխատանքային օրը:

Հաշվարկված տոկոսագումարները վճարվում են քարտային հաշվին ամսական կտրվածքով՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

Կանխիկի տրամադրման օրական առավելագույն չափը, մեկ գործարքի առավելագույն սահմանաչափը և կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակը կարող են անվճար փոփոխվել քարտապանի բանավոր հանձնարարությամբ:

## Սակագներում օգտագործված տերմինների մեկնաբանություն

• **Անտոկոս ժամանակահատված** – արտոնյալ ժամանակահատված, որի ընթացքում վճարային գործարքների կատարման համար քարտի վարկային միջոցների օգտագործած մասը քարտային հաշվին մուտք անելու դեպքում քարտապանը տոկոսագումարներ չի վճարում: Կանխիկին հավասարեցված գործարքների (բանկումատներում, POS տերմինալներում կամ առցանց հարթակներում քարտի միջոցով իրականացված գործարքներ, որոնք հեշտությամբ կարող են փոխարկվել կանխիկ միջոցների: Որպես այսպիսի գործարքներ կարող են դիտարկվել էլեկտրոնային դրամապանակներով իրականացված գործարքները, բանկային հաշիվների միջև փոխանցումները և այլն) դիմաց անտոկոս ժամանակահատված չի հաշվարկվում: Ընդ որում, նշված դրույթը տարածվում է նաև այն բոլոր սպասարկման կետերի վրա, որոնք վերջիններին սպասարկող բանկերի կողմից գրանցվել են որպես էլեկտրոնային դրամապանակներ:

• **Ամսական պարտադիր մարումներ** – յուրաքանչյուր ամսվա վերջի դրությամբ օգտագործված վարկային գծի նշված տոկոսը ենթակա է վճարման այդ ամսվա ավարտից հետո 50 օրվա ընթացքում: Տվյալ ժամկետում նշված պարտավորությունը չկատարելու դեպքում քարտապանը պարտավորվում է բացի պարտադիր մարման ենթակա գումարից վճարել նաև տվյալ պահին քարտային հաշվի սպասարկման համար առաջացած դրամային պարտավորությունը, առաջացած գերաձախսը և գերաձախսի նկատմամբ հաշվարկված տոկոսները:

• **Լրացուցիչ քարտ** – գործող քարտային հաշվին կցված այլ վճարային համակարգի քարտ: Լրացուցիչ քարտը հնարավորություն է տալիս Քարտապանին օգտագործել հիմնական քարտային հաշվին առկա միջոցները, եթե հիմնական քարտի հետ առաջացել են չնախատեսված խնդիրներ կամ այն չի սպասարկվում տվյալ առևտրի/սպասարկման կետի և/կամ բանկումատի կողմից: Լրացուցիչ քարտի միջնորդավճարը գանձվում է միանվագ քարտի գործողության ողջ ժամկետի համար՝ բացառությամբ լրացուցիչ American Express Cashback քարտի, որի սպասարկման միջնորդավճարը գանձվում է ամսական սկզբունքով:

• **Կից քարտ** – գործող քարտային հաշվին կցված միևնույն վճարային համակարգի և տեսակի քարտ: Կից քարտը տրամադրվում է հիմնական քարտի քարտապանի կողմից նշված անձին և հնարավորություն է ընձեռում վերջինիս օգտագործել հիմնական քարտի հաշվին առկա միջոցները կից քարտի դիմումի մեջ նշված սահմանաչափերի շրջանակում: Ցանկացած տեսակի քարտի համար տրամադրվում է առավելագույնը 2 կից քարտ, բացառությամբ American Express Gold (առավելագույնը 4 կից քարտ) և ArCa Business ու Visa Business (անսահմանափակ քանակությամբ կից քարտեր) քարտատեսակների: Կից քարտի միջնորդավճարը գանձվում է միանվագ քարտի գործողության ողջ ժամկետի համար:

• **SMS-տեղեկացում** – քարտի դիմումի մեջ նշված հեռախոսահամարին քարտապանի քարտային հաշվի շարժի վերաբերյալ SMS-հաղորդագրության ստացում: